

ՌԻԱՏ ՍԱԼԱՄԵԻ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Լիբանանի մեջ ուղղամտության երրորդական դիտարանը երկ կայտարարեց, թե ֆրանսացի դատաւոր մը պիտի ժամանէ Պէյրուսի մասնակցելու համար Կեդրոնական դրամատան կառավարիչ Ռիատ Սալամեի հարցաքննության, ներկայութեամբ Պէյրուսի աւագ քննիչ Շարպէլ Ապու Սամրալի: Սալամե կը դիմագրաւէ դրամի լուացումի, կեղծիքի եւ ապօրինի հարցաւուցումի ամբաստանութիւններ:

ՔԱՅԼ ՄԸ ԵՒՍ ԴԵՊՒ ԱՆԴՈՒՆԴ

Լիբանանի էլեմտական զուգահեռ շուկան երկ օրուան ընթացքին ակասատես դարձաւ լիբանանեան լիրայի յանկեալ արժեզրկումի հերթական ալիքներուն: Գիշերուան ժամերուն, տոլարին փոխարժեքը կը մտնէր հարիւր հա-

փական վարժարաններուն մէջ պաշտօնավարող ուսուցիչներու սենտիքան այսօր յայտարարեց դասադուլ, նկատի առնելով որ ուսուցիչները կարողութիւն չունին հասնե-



զար լիբանանեան լիրայի: Ամերիկեան տոլարի փոխարժեքի կտրուկ աճին զուգահեռ, ընդամենը քանի մը վայրկեանի ընթացքին բարձրացան նաեւ վառելանիւթի սակագիները, որոնց յաջորդեց հացին սակագինը: Ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարարութիւնը երկ երեկոյեան



լու դարոց: Սենտիքան նաեւ յետմիջօրէին պիտի գումարէ ժողով մը՝ վճռելու յաջորդ քայլերը, առանց բացառելու մազլոգողական միջոցներու դիմելու հաւանականութիւնը: Զամաշխարհային դրամատան Միջին Արեւելքի հարցերու փոխնախագահ Ֆարիտ Պալիաժ տեսակցեցաւ էլե-



կայտարարեց, որ պենզինի թիթեղին սակագինը բարձրացած է եւս 6 հազարով, իսկ կազը՝ 25 հազարով: Այսպիսով, 95 օքթան պենզինի թիթեղին գինը երկ երեկոյեան հասաւ 1 միլիոն 713 հազարի, իսկ կազին գինը՝ 1 միլիոն 162 հազարի: Տնտեսութեան նախարարութիւնը յայտա-



մուտքի նախարարի պաշտօնակատար Եուսէֆ Կալիլի հետ եւ դրամատան պատրաստակամութիւնը յայտնեց այս արտակարգ փուլին աջակցելու Լիբանանին՝ կարգ մը հրատապ խնդիրներ լուծելու համար: Ան մասնաւորաբար նշում կատարեց ցորենի եւ դպրոցներու ճգնաժամերը մեղմելու հնարաւորութեան:



րարեց, որ հացի միջին չափի կապոցին գինը բարձրացած է 35 հազար, իսկ 1062 կրամ կշռող մեծագոյն կապոցը՝ 44 հազար լիրայի: Էլեմտական եւ ուժանիւթային սղաճի լոյսին տակ, սե-

«ԼԻԲԱՆԱՆԻ ԳԱՐՈՒՆԸ ՄՕՏԱԼՈՒՄ Է»



(Շարք տեսնել 2րդ էջ) >>

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾԱՆՐՁԱՆԱՅԻՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Իրանի Արտաքին գործերու նախարարութեան բանբեր Նասեր Քանանի յայտնեց, որ Սեւտական Արաբիոյ հետ իրենց կնքած բնականոնացումի համաձայնութիւնը պիտի ամրապնդէ տարածաշրջանային համագործակցութիւնը

կառավարութեան, պիտի չկարենանք միացեալ ծրագիրներ իրականացնել»:



Եւ դրական ազդեցութիւն ունենայ շրջանի միւս երկիրներուն վրայ եւս: Ըստ բանբերին, Թեհրան-Ռիատ համաձայնութեան դրական ազդեցութիւնը կարելի պիտի ըլլայ նկատել Եմենի մէջ՝ հակամարտութեան վերջ տալու առումով:

ԴՐԱՄԱՏԱՅԻՆ ՆՈՐ ԿԱՐԳԵՐ

Միացեալ Նահանգներու նախագահ Ծո Պայտըն ապահով համարեց ամերիկեան դրամատանային համակարգը եւ հաւաստիացուց, որ աւանդաբերուն դրամները երաշխաւորուած են: «Միլիքոն Վելի» դրամատան փլուզումի



լոյսին տակ Պայտըն նշեց, որ գոնկրեսէն պիտի պահանջէ խստացնել դրամատուներու գործունեութեան կարգերը՝ խուսափելու համար նման ցնցումներու կրկնութենէն եւ պահպանելու ամերիկացիներուն աշխատանքները: Նշեց, որ ամերիկեան վարչակարգը Կիրակի օր միջամտելով ձեռնարկած էր էլեմտական շարք մը արտակարգ միջոցներու՝ պահպանելու համար դրամատանային համակարգին նկատմամբ վստահութիւնը:

ԷՍԻՐԱԹԱԿԱՆ ՄՏԱՓՈՒՆՈՒԹԻՒՆ

Արաբական Միացեալ Էմիրութիւններու ղեկավարութիւնը յայտարարեց, որ կը մտադրէ առկախել Իսրայէլէն հակաօդային պաշտպանութեան համակարգերու գնումը՝ անցնող ամիսներուն Իսրայէլի վարուելակերպին պատճառով: Էմիրութիւններու նախագահ Սոհամմատ Պըն Չայետ այս առումով ըսաւ. «Մինչեւ վստահ ըլլանք, որ վարչապետ Պեհմանին Նեթանիահու կը տիրապետէ իր

ՊԱՔՊԱՆԵԼ ԱՐՅԱԽԻ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Արցախի Զանրապետութեան Ազգային ժողովի խմբակցութիւնները Զայաստանի Զանրապետութեան իշխանութիւններէն պահանջեցին հաւատարիմ մնալ Գերագոյն խորհուրդի 1992 թուականի Յուլիս 8-ի որոշումներուն եւ կասկածի տակ չընել Արցախի ժողովուրդին ինքնորոշումի իրաւունքը: Արցախի Ազգային ժողովի խմբակցութիւնները միացեալ յայտարարութեամբ մը դատապարտեցին ատրպէյճանական պաշարումը, որ հատեց երեք ամիսը: «Նման պայմաններու տակ անընդունելի են ուղիղ երկխօսութեան մասին խօսակցութիւնները», ըսին արցախցի երեսփոխանները, միաժամանակ շեշտելով, որ դարաբաղեան հակամարտութիւնը պետք է լուծուի բանակցութիւններու միջոցաւ՝ միջազգային համապատասխան կառոյցներու միջնորդութեամբ:

Արցախի Զանրապետութեան նախագահի խորհրդական Դաւիթ Պապայեան յայտնեց, որ Ստեփանակերտի եւ



Պաշուի միջեւ բանակցութիւնները հնարաւոր են միայն կողմերու իրաւահաւասարութեան պայմաններուն տակ: Դիտել տալով, որ Ատրպէյճանի իշխանութիւնները վերստին խափանած են Զայաստանէն Արցախ կազմաւտակարարումը, Արցախի արտաքին գործերու նախկին նախարարը հարց տուաւ, թե «ի՞նչ կը մտածեն ՄԱԿ-ի դատարանին դատաւորները»:

ԿԱՅՈՒՆՈՒԹԻՒՆ ԶԱՍՏԱՏԵԼՈՒ ՉԱՆԵՐ

Զայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունեց ՄԱԹՕ-ի նախկին ընդհանուր քարտուղար Անտերս Ֆոկ



Ռազմուսէնի գլխաւորած պատուիրակութիւնը: Ժողովականները միտքեր փոխանակեցին տարածաշրջանային անվտանգութեան եւ մարտահրաւերներուն շուրջ: Փաշինեան եւ Ռազմուսէն կարեւորեցին Զարաւային Կովկասի մէջ կայունութեան հաստատումին ուղղութեամբ ջանքերու շարունակութիւնը: Ռազմուսէն տեսակցեցաւ նաեւ Զայաստանի Անվտանգութեան խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեանի հետ՝ քննարկելու տարածաշրջանային եւ միջազգային անվտանգային իրավիճակը: Գրիգորեան ներկայացուց Զայաստանի շուրջ անվտանգային մարտահրաւերները եւ կարեւորեց անվտանգութեան ապահովումի գործին մէջ Զայաստանի կողմէ ժողովրդավարացումին ուղղուած ջանքերը:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՆՈՐ ԲԱՆԲԵՐ

Զայաստանի արտաքին գործերու նախարարին հրամանով Անի Պատալեան նշանակուեցաւ նախարարու-



թեան մամուլի բանբեր: Ան կը տիրապետէ անգլերէնին, ֆրանսերէնին եւ ռուսերէնին: Նշեց, որ նախկին բանբեր Վահան Յունանեան քանի մը օր առաջ դիմում գրած էր՝ պաշտօնէն հրաժարելու մասին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱԹԵՆԻ ՕԴԱԿԱՅԱՆԻՆ ՄԵՋ ԱՐԺԱՆԱՅԱԲ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ

Շաբաթ, 11 Մարտ 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Յայրապետը, հովուապետական այցելութեամբ ժամանեց Աթենք (Յունաստան) և օդակայանին մէջ արժանացաւ պաշտօնական ընդունելութեան: Նորին Ս. Օծութեան դիմաւորելու եկած էին Յունաստանի հայոց թեմի



առաջնորդ Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան, Յունաստանի մէջ Յայաստանի Յանրապետութեան հիւպատոս Տիգրան Վարդանեան և Լիբանանի դեսպան Ղատի Խուրի, Յունաստանի յոյն ուղղափառ եկեղեցւոյ արքեպիսկոպոսին ներկայացուցիչը, Յունաստանի հայ կաթողիկէ համայնքի առաջնորդ Գերշ. Յովսէփ Ծ. Վրդ. Պեգազեան, Յունաստանի հայ աւետարանական համայնքի պետ վերապատուելի Վիգէն Չոլաքեան, Ազգային Վարչութեան ատենապետ Թագուր Յովակիմեան, թեմին մէջ ծառայող միաբան, քահանայ հայրեր ու ազգայիններ:


Օդակայանին մէջ տեղի ունեցած ընդունելութենէն անմիջապէս ետք, պետութեան կողմէ տրամադրուած ինքնաշարժով Վեհափառ Յայրապետը եւ իր շքախումբը մեկնեցան Ազգային Առաջնորդարան, ուր Յայրապետը դիմաւորուեցաւ «Յրաշափառ»-ի երգեցողութեամբ: Յայրապետը թափօրով առաջնորդուելէ ետք Ս. Խորան՝ կատարուեցաւ կանոնական աղօթք: Իր ողջոյնի խօսքին մէջ, առաջնորդ սրբազանը յայտնեց, թէ Վեհափառ Յայրապետին Յունաստանի հայոց թեմ այցելութիւնը յատուկ խանդավառութիւն եւ տօնական մթնոլորտ ստեղծեց թեմէն ներս: Ան բարի գալուստի խօսքին մէջ բազմաբեղուն ծառայութեամբ լեցուն երկար տարիներ մաղթեց Նորին Սրբութեան և ապա հրաւիրեց Յայրապետը՝ իր պատգամը փոխանցելու հաւատացեալ ժողովուրդին:

Արամ Ա. Վեհափառ Կաթողիկոս իր ուրախութիւնը յայտնեց Յունաստանի հայոց թեմէն ներս գտնուելուն առիթով՝ ընդգծելով, որ հովուապետական այցելութեան հիմնական նպատակը ժողովուրդին հետ ըլլալ է, անոր ցաւերը լսել ու դիմագրուած դժուարութիւնները ճանչնալ է: Ան իր խօսքին մէջ յատուկ կերպով շեշտեց թեմին վերակազմակերպման անյետաձգելի հրամայականը: «Անցնող երկու տարիները հռչակեցինք «Սփիւռքի Տարի»: Սփիւռքի մեր կենսքն է ներս թեմերը կարելու դեր ունի: Ուր որ գաղութ հաստատուած է՝ հոն եկեղեցիներ նաեւ կառուցուած են, եւ եկեղեցիներուն շուրջ՝ թեմական կառոյցներ գործած են: Զետեւաբար, Մեր այս տարուան հովուապետական այցելութիւններու ընթացքին պիտի խօսինք Սփիւռքի մեր կենսքը վերակազմակերպելու եւ վերակենսունակացնելու մասին: Ո՛չ միայն պիտի խօսինք, այլ ծրագրուած գործընթացներ պիտի հաստատենք», ըսաւ Վեհափառ Յայրապետը:

Պաշտօնական ընդունելութենէն ետք, Ազգային Առաջնորդարանի դահլիճին մէջ, Յայրապետը մտերմիկ հանդիպումներ ունեցաւ հոգեւորականաց դասուն, Առաջնորդարանի անձնակազմին եւ ազգայիններուն հետ:

«ՓՏԱՃՈՒԹԵԱՆ ԴԷՄ ՊԱՅՔԱՐԸ ԱՅՍ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՄԱԿՆԻՇՆ Է» ԿՆՍԵ ԳՐԻԳՈՐ ՄԻՆԱՍԵԱՆ

Համավարակի ընթացքին չարաշահումներ կատարելու դէպքով նախաձեռնուած քրեական վարոյթը կը հաստատէ այն, որ Յայաստանի մէջ չկան իւրայիններ կամ այլ



երաշխիքներ ունեցողներ: Այս մասին ըսաւ արդարադատութեան նախարար Գրիգոր Միխայսեանը՝ անդրադառնալով քրեական փոխադրաբար Գերոզ Սիմոնեանի եւ նա 10 անձերու վերաբերող քրեական վարոյթին: «Այս է փտածութեան դեմ պայքարը, ուր չկան իւրայիններ, չկան քաղաքական խմբակներ մէջ գտնուող մարդոց կամ պաշտօնեաներու համար այլ երաշխիքներ: Ես միայն ուրախ եմ, որ նման քննարկումները կան, նման քրեական վարոյթներով ամբողջ պետական համակարգը, համայնքային աշխատողները կը հասկնան, որ փտածութեան դեմ անգիշում պայքար է: Եթէ մարդը կատարած է յանցագործութիւն, ինքը պիտի պատժուի մեր երկրին մէջ», ըսաւ Միխայսեան՝ ընդգծելով, որ փտածութեան դեմ պայքարը այս իշխանութեան մակնիշն է:

ԱԼԷՆ ՍԻՄՈՆԵԱՆԸ ՊԱՐԷՆՅՈՒՄԻ ՄԵՋ ՀՆՆԻՎՈՒՄԸ Է ՊԵԼՃԻՔԱՅԻ, ՀՈՒՆԳԱՐԻՈՅԻ ԵՒ ԵԳԻՊՏՈՍԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՐՆԵՐՈՒ ԴԵԿՎԱՐՆԵՐՈՒՄՆ ԶԵՏ

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնեանը Պահրէյնի մէջ խաղաղութեան եւ անվտանգութեան հարցերին նուիրուած Միջխորհրդարանական միութեան վեհաժողովի շրջանակին մէջ շարք մը հանդիպումներ ունեցած է տարբեր երկիրներու խորհրդարաններու ղեկավարներուն հետ:



Գործընկերային հանդիպումներու եւ պաշտօնական ճաշկերպի ընթացքին ՀՀ ԱԺ նախագահը խորհրդարաններու ղեկավարներուն ներկայացուցած է 44-օրեայ պատերազմին յաջորդող իրադրութիւնը՝ մասնաւորեցնելով Ատրայեճանի կողմէ վարուող հակահայ քարոզչութեան եւ Յայաստանի ինքնիշխան տարածք ներխուժելու դէպքերը: Պեյճիքայի Սենատի նախագահ Ստեֆանի Դօզի հետ քննարկուել են Լեռնային Ղարաբաղի հայերի շրջափակման առնչուող եւ չլուծուած հումանիտար խնդիրներին վերաբերող հարցեր: Հունգարիայի Ազգային ժողովի նախագահ Լազլօ Զոլտորի հետաքրքրուած է Լաչինի՝ որպէս կենսիկ միջանցքի ճգնաժամի հետեւանքներուն մասին, քննարկուած են նաեւ տարբեր միջազգային հարթակներու մէջ խնդիր բարձրաձայնման արդիւնքները: Ազգային ժողովի նախագահը հանդիպած է նաեւ Եգիպտոսի խորհրդարանի ղեկավարին հետ:

ՀՀ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՆ ՈՒ ՆԱԹՕ-Ի ՆԱԽԿԻՆ ԳԼԽԱՌՔ ԶԱՐԳՈՒՄԸ ԸՆՆԱՐԿԱԾ ԵՆ ՏԱՐԱՍԱՆԵՐԳՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԱՌՆՉՈՒՂ ՀԱՐՉԵՐ

ՀՀ պաշտպանութեան նախարար Սուրեն Պապիկեան ընդունած է Ռասմուսեն Կլոպալ միջազգային քաղաքական խորհրդատուական կազմակերպութեան հիմնադիր նախագահ եւ ՆԱԹՕ-ի նախկին գլխաւոր քարտուղար Անտերս Ֆոկ Ռասմուսենն ու կազմակերպութեան ներկայացուցիչները:



Հիւրին խնդրանքով պաշտպանութեան նախարարը ներկայացուցած է տարածաշրջանի վերջին զարգացումները եւ անոնց հետեւանքով ստեղծուած իրադրութիւնը: Հանդիպման ընթացքին քննարկուած են տարածաշրջանային անվտանգութեան առնչուող շարք մը հարցեր: Նշենք նաեւ, որ վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ ընդունած է Ռասմուսենը եւ անոր գլխաւորած պատուիրակութիւնը: Նիկոլ Փաշինեան եւ Անտերս Ֆոկ Ռասմուսեն ջերմութեամբ յիշած են սոյն թուականի Փետրուար 18-ին Միւնխի Անվտանգութեան Համաժողովի ծիրին մէջ ունեցած հանդիպումը: Չրուցակիցները միտքեր փոխանակած են տարածաշրջանային զարգացումներու եւ անվտանգային մարտահրաւերներու շուրջ: Զննարկուած են Հարաւային Կովկասի մէջ անվտանգութեան ու կայունութեան վերաբերող հարցեր, երկուստեք կարելու ընդունուած են այդ ուղղութեամբ շարունակական ջանքերը:

«ԼԻԲԱՆԱՆԻ ԳԱՐՈՒՆԸ ՄՕՏԱԼՈՒՏ Է»

(Շարունակուած Ա. Էջէն)

Ելեմտական ու տնտեսական անհամար խնդիրներով հանդերձ, վարչապետի պաշտօնակատար Նեժիպ Միքաթի երկէ յայտնեց, որ «Լիբանանի գարունը մօտալուտ է»: Միքաթի Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Յայոց Պատրիարքութեան մէջ տեսակցեցաւ Ռաֆայէլ Պետրոս Ի.Ա. պատրիարքին հետ՝ քննարկելու լիբանանեան ընդհանուր զարգացումները: Պատրիարքը դրուատեց Միքաթիի գործունեութիւնը եւ շեշտեց անյապաղ նախագահ ընտրելու կարելուութիւնը, որովհետեւ «մարմին մը չի կրնար գործել առանց գլուխի»: Պատրիարքը կեդրոնացաւ քաղաքայիններուն դիմագրուած ընկերային, առողջապահական եւ կրթական մարտահրաւերներուն վրայ, կոչ ուղղելով գտնելու լուծումներ՝ բոլոր ղեկավարութիւններուն մասնակցութեամբ: Միքաթի իր կարգին նշեց, որ բաց համագործակցութեան մէջ է լիբանանեան բոլոր խաւերուն հետ: Անոր խօսքով, Լիբանանի մէջ լուծում կարելի չէ պատկերացնել առանց քաղաքական համաձայնութեան, գործունեայ խորհրդարանի եւ լիարժէք կառավարութեան: Միքաթի շեշտեց, որ լուծումի բանալին Նոր Նախագահի անյապաղ ընտրութիւնն է:

Վարչապետի պաշտօնակատարը նշեալ նիւթերը արծարծեց նաեւ մարտիկներու պատրիարք Պըշարա Ռահի կարտիսալին հետ: Միքաթի նշեց, որ իրենք համակարծիք են Նոր Նախագահի ընտրութեան անհրաժեշտութեան առնչութեամբ, որպէսզի կարգաւորուի երկրին սահմանադրական կենսքը եւ վերականգնուի հաստատութիւններուն հեզասահ աշխատանքը: Խօսելով գործող կառավարութեան նիստեր գումարելու երեւոյթին եւ քննադատութիւններուն մասին, Միքաթի ըսաւ. «Պատրիարքին բացատրեցի կառավարութեան արտակարգ նիստեր գումարելու անհրաժեշտութիւնը՝ ապահովելու համար հաստատութիւններուն աշխատանքը եւ լուծելու հրատապ խնդիրները, իսկ Ռահի ըմբռնու՞ ցուցաբերեց»:

Երկէ Պըքրիի այցելեց նաեւ Լիբանանի մէջ Սեւտական Արաբիոյ դեսպան Ռալփ Պուխարին: Վերջինս Այն



Ռիսէի մէջ տեսակցեցաւ խորհրդարանի նախագահ Նեպի Պըրրիի հետ եւ դիտել տուաւ, որ «այս փուլին անհրաժեշտ է ապահովել բարի կամքի եւ խոհեմութեան»: Պըրրի ընդունեց նաեւ Սիպեալ Նահանգներու դեսպան Տորոթի Շիան, որուն հետ քննարկեց երկկողմանի յարաբերութիւնները եւ լիբանանեան զարգացումները:

ՀԱՄԱՆՄԲՈՂ ՆԱԽԱԳԱՅԻ ԿԱՐԻՔ

Խորհրդարանի նախագահ Նեպի Պըրրի շեշտեց օր առօր նախագահ ընտրելու անհրաժեշտութիւնը: «Մենք կարիք ընկնք մեր ազգային շահերը պաշտպանող նա-



խագահի մը, որ կը համախմբէ բոլորը եւ չի պառակտեր: Ան պետք է վայելէ քրիստոնեաներուն եւ մահմետականներուն հաւանութիւնը, պետք է յանձնառու մնայ արաբական աշխարհին հետ Լիբանանի շահերուն եւ Թայէֆի համաձայնութեան գործադրութեան», ըսաւ Պըրրի, խմբագիրներու եւ մամուլի սեկտորներու պատուիրակութիւնները ընդունած ատեն: Խորհրդարանի նախագահը ցաւ յայտնեց, որ խորհրդարանի քրիստոնեայ երկու մեծագոյն ուժերը մերժած են իր երկխօսութեան հրաւերը: Կարծիք յայտնելով, որ Մարատա հոսանքի նախագահ Սլէյման Քրանժիէ կը վայելէ նախագահի պաշտօնը ստանձնելու բոլոր չափանիշերը, Պըրրի ըսաւ. «Կ'ուզեմք նախագահ մը, որ կրնայ սուրիացիներուն հետ քննարկել սահմանագծումի հարցը եւ լուծել տեղահանուածներուն թղթածրարը, որովհետեւ եթէ մեր յոյսը դնենք եւրոպացիներուն եւ ամերիկացիներուն վրայ, ապա անոնք հետաքրքրուած չեն այս հարցով: Նոր նախագահը պետք է կարենայ որդեգրել պաշտպանութեան ռազմավարութիւն մը եւ յանձնառու մնայ Թայէֆին», շեշտեց խորհրդարանի նախագահը:

ԿԱՐԶԱՊԵՏԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱՌՈՒ

Լիբանանի մուֆթիներու խորհուրդը երկէ նիստ մը գումարեց Հանրապետութեան մուֆթի շէյխ Ապտէլ Լաթիֆ Տարիանի գլխաւորութեամբ եւ մաղթեց, որ Սեւտական Արաբիոյ եւ Իրանի միջեւ կնքուած համաձայնութիւնը դառնայ փոխադարձ յարգանքի եւ համագործակցութեան հիմքը, երկիրներու ներքին հարցերուն միջամտութիւններէն հեռու: Անուղղակիօրէն դատապարտելով Միքաթիի նկատմամբ երեսփոխան ժողպան Պասիլի վերջին քննադատութիւնը, մուֆթիները մերժեցին վարչապետութեան թիրխաւորումը, շեշտելով, որ Միքաթի յանձնառու կը մնայ սահմանադրութեան՝ մեղմելու քաղաքայիններուն տառապանքը:

BOGHOS OPTIC
Autoroute Jdeideh,
Tel.: 01-870016

«ՆԵՐԿԱՅ ԿԵԱՆՔԻ ՄԱՐՏԱՀՐԱԿԵՐՆԵՐՈՒՆ ԴԻՄԱՅ ՀԱՅ ԿԵԱՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ Է»

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Այս շեշտադրումով Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը իր Հայրապետական պատգամը ուղղեց Յունաստանի հայության, Աթենքի Սուրբ Յակոբ եկեղեցույ մեջ, յընթացս Ս. Ե. Անմահ Պատարագին, որ մատուցուեցաւ Նորին Սրբութեան Յունաստանի հայոց թեմին տուած հովուապետական օրհնաբաշխ այցելութեան երկրորդ օրը՝ Կիրակի, 12 Մարտ 2023-ի առաւօտուն:



Հայրապետը դիմարկուեցաւ հաւատացեալներու հոծ բազմութեան կողմէ, որոնք եկած էին լսելու Հայրապետին պատգամը եւ ստանալու անոր հայրական ու հայրապետական օրհնութիւնը:

Վեհափառ Հայրապետը իր պատգամին սկիզբը բարձր գնահատանքով ողջունեց Յունաստանի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեանի, ինչպէս նաեւ հոգեւոր դասուն, Ազգային Վարչութեան եւ հայ կեանքէն ներս գործող բոլոր կազմակերպութիւններուն խանդավար ու բեղուն ծառայութիւնը:

Հայրապետը իր պատգամին բնաբան ընտրած էր Յովհաննու Անետարանին հետեւեալ տողերը՝ «Ես եմ աշխարհի լոյսը: Ով որ ինծի կը հետեւի խաւարին մէջ պիտի չքայլէ, այլ պիտի ունենայ այն լոյսը, որ կեանքին կ'առաջնորդէ» (Յհ 8:12): Նորին Ս. Օծութիւնը ըսաւ, որ լոյսը ստեղծուած



Է Աստուծոյ կողմէ, ինչպէս Ծննդոց գիրքին մէջ կը կարդանք: Տիեզերքի ստեղծագործութեան առաջին օրը Աստուծոյ թող լոյս ըլլայ եւ լոյս եղաւ: Ուստի, լոյսը Աստուծային յայտնութեան ու ստեղծագործութեան առաջին ու եական երեւոյթներէն մէկն է: Լոյսն է, որ տիեզերքի այլ տարրերուն իմաստ ու նպատակ կու տայ: Հայրապետը՝ բացատրելով լոյսին քրիստոնէական հասկացողութիւնը՝ հաստատեց, որ լոյսը եւ խաւարը չեն կրնար գոյակցիլ: Լոյսը ստեղծուած է Աստուծոյ կողմէ. անոր գոյաւորման աղբիւրը Աստուծոյ է: Խաւարը լոյսին բացակայութիւնն է: Զետեւաբար, ուր լոյս չկայ՝ հոն խաւարը կը տիրէ: Ծարուսակելով իր պատգամը՝ Վեհափառ Հայրապետը ըսաւ. «Լոյսը սոսկ ֆիզիքական երեւոյթ մը չէ, անկապ հոմանիշ է Աստուծոյ ներկայութեան: Աստուծոյ ոչ միայն ստեղծիչն է լոյսին, այլ նաեւ անոր ներկայութիւնն է. լոյսին իմաստ



ու նպատակ տուողը Աստուծոյ Ինքն է: Երբ լոյսը բացակայ է, հոն կը տիրէ խաւարը, այլ խօսքով՝ ուր Աստուծոյ բացակայ է, հոն կը տիրէ չարիքը: Հին Կտակարանի պատմութիւնը ցոյց կու տայ, որ մարդը հեռացաւ լոյսէն, այլ խօսքով՝ Աստուծոյ՝ ընտրելով խաւարը եւ չարը: Ուստի, ուր խաւար կը տիրէ, հոն նաեւ չարը կը տիրէ: Ահա այս կացութեան դիմաց լոյսի աղբիւրը՝ Աստուծոյ, Իր Միածին Որդին դրկեց, որպէսզի դառնայ խաւարին մէջ մնացած աշխարհին լոյսը: Քրիստոս Ինքն է ճշմարիտ լոյսը աշխարհին: Անոր առաքելութիւնը խաւարին դիմաց լոյս տարածել, մարդկային կեանքը լոյսով լեցնել էր: Անետարանները յստակ կերպով կը պարզեն, որ Քրիստոս Իր կեանքով ու հրաշքներով ցոյց տուաւ մարդուն լոյսի ճամբան: Լոյսի ճամբան կեանքի ու փրկութեան ճամբան է, եւ Քրիստոսի հետեւելու ուխտը կատարած անձը պետք է քայլէ այդ ճամբէն:

քով ու հրաշքներով ցոյց տուաւ մարդուն լոյսի ճամբան: Լոյսի ճամբան կեանքի ու փրկութեան ճամբան է, եւ Քրիստոսի հետեւելու ուխտը կատարած անձը պետք է քայլէ այդ ճամբէն:

Ապա, Վեհափառ Հայրապետը անդրադառնալով մեր ազգի դիմագրաւած դժուարութիւններուն՝ ըսաւ. «Պատմութեան ընթացքին յաճախ խաւարը փորձեց տիրապետող ներկայութիւն դառնալ մեր կեանքէն ներս, սակայն Քրիստոսի լոյս ներկայութեամբ, մենք կրցանք խաւարը վանել մեր կեանքէն, յաղթել խաւարին տիրապետութեան եւ մեր կեանքը Քրիստոս-լոյսով պայծառակերպել: Ներկայ ժամանակներուն խաւարը տարբեր կերպերով ու անուններով դարձեալ շրջապատած է հայ կեանքը, ամէն



տեղ, Արցախէն սկսեալ, Հայաստան եւ Սփիւռք: Որպէս երկնային լոյսը ընդունած առաջին ժողովուրդ, մենք կոչուած ենք այդ լոյսով գիտած յաղթահարել ամէն տեսակ խաւարային մածոմներ, մօտեցումներ ու ծրագիրներ, որոնք կը փորձեն մեր ժողովուրդը պահել խաւարին մէջ: Մենք լոյսի՝ ազգ ենք, լուսապաշտ ազգ ենք, լուսատրիչներ ծնած եւ աշխարհին լոյս սփռած ազգ ենք: Այս հաւատքով ու գիտակցութեամբ պետք է ապրինք՝ մեր կեանքը շաղախելով լոյս-Քրիստոսով:

Նորին Ս. Օծութեան պատգամին վերջին բաժինին կերտական մտածումն էր Սփիւռքի վերակազմակերպումն ու հայ երիտասարդութիւնը: Արդ, Վեհափառ Հայրապետը, խօսելով իր հովուապետական այցելութեան առանցքային նպատակին մասին՝ յիշեցուց, որ 2022 ու 2023 տարիները հռչակած էր «Սփիւռքի Տարի» եւ այս ծիրին մէջ անդրադարձած Սփիւռքի վերակազմակերպման ու վերակենսունակեցման հրամայականին: «Այս ուղղութեամբ, մեր թեմերու վերակազմակերպումը առանցքային կարելորութիւն ունի: Մեր հովուապետական այցելութեան ընթացքին կարելորութեամբ պիտի անդրադառնանք Յունաստանի հայոց թեմի վերակազմակերպման ծրագրին եւ թեմի հոգեւոր թե՛ աշխարհական պատասխանատուներուն հետ միասին պիտի մտածենք, թէ ինչ ձեւով կըրնանք թեմական կառոյցները ու անոնց աշխատանքը վերատեսութեան ու վերակազմակերպման ենթարկել՝ այնպիսի մօտեցումով, որ անոնց գործունէութիւնը համապատասխանէ մեր ներկայ կեանքի պայմաններուն ու կարիքներուն: Վերակազմակերպման մեր աշխատանքին հիմնական նպատակը երիտասարդութիւնը մեր եկեղեցույ



շուրջ համախմբելն է: Այս ուղղութեամբ յատուկ ծրագիրներ հարկ է, որ պատրաստուին եւ Ազգային Առաջնորդարանին եւ Ծովերուն կողմէ համադրուած կերպով իրականացուին՝ երիտասարդներուն մասնակցութեամբ: Դժբախտ երեւոյթ մըն է, որ կը դիմագրաւէ հայութիւնը, ամէն տեղ: Այսօր երիտասարդութիւնը հետզհետ կը հեռանայ մեր հաւաքական կեանքէն: Հնամաշ ու զմռսուած մօտեցումներով ու կեցուածքներով աւելի պիտի հեռացնենք երիտասարդութիւնը թե՛ ազգային եւ թե՛ եկեղեցական կեանքէն: Զետեւաբար, պետք է երկխօսութիւն ստեղծել երիտասարդութեան հետ ու վստահիլ անոնց՝ փոխանակ զանոնք հեռու պահելու մեր կառոյցներէն ու ընդհանրապէս մեր հաւաքական կեանքէն», ըսաւ Նորին Սրբութիւնը:

Ս. Ե. Անմահ Պատարագէն անմիջապէս ետք, եկեղեցույ մէջ կատարուեցաւ ծաղկեալ փիլոսոփայութեան թեմին մէջ ծառայող երկու քահանայ հայրերուն՝ Արժ. Տ. Պարտե Զիլյ. Խաչերեանին եւ Արժ. Տ. Նարեկ Զիլյ. Ծախիսեանին: Ապա, Հայրապետը, իբրեւ գնահատանք թեմէն ներս կատարուած ծառայութեան, զմեզ Ն.Ս.Օ.Տ.Տ. Յովհաննէս Ծ. Վրդ. Սաղործեանին նուիրեց լաւագոյն: Յիշեալ արարողութիւններէն ետք տեղի ունեցաւ ժողովրդային ընդունելութիւն եւ աջահամբոյր, որուն յաջորդեց պաշտօնական ճաշկերպութիւն ի պատիւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին: Ծաշկերպութիւն ներկայ էին թեմական ու համայնքային պատասխանատու մարմինները:

ՎԵՎՓԱՌ ԿԱՅՐԱՊԵՏԸ ՊԱՐԳԵՒԱՏՐԵՅ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻՆ ՈՒ ԳԱՂՈՒԹԻՆ ՆՈՒԻՐԵԱԼՆԵՐԸ

Շաբաթ, 11 Մարտ 2023-ի գիշերը, «Լեւոնիօ» սրահին մէջ, Յունաստանի հայոց թեմին կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ գեղարուեստական յայտագիր՝ ի պատիւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Կայսրիկոսի: Յայտագրին, Յունաստանի Գոմոթիի եւ Թեսաղոնիկէ շրջաններէն Աթենք համախմբուած երիտասարդներ, հրամցուցին ազգային երգերէն կտորներ ու ներկայացուցին հայ մշակութային ժառանգութենէն պարեր:



Հանդիսութեան բացման խօսքը արտասանեց «Ազատ Օր» թերթի խմբագրապետ Զեբոր Էքիզեան: Ան իր խօսքը կերտունացուց Վեհափառ Հայրապետին 1996 թուականին Յունաստան կատարած հովուապետական անդրանիկ այցելութեան ընթացքին արտասանած խօսքին վրայ, ուր Նորին Ս. Օծութիւնը կոչ կ'ուղղէր սփիւռքահայութեան՝ վերակազմակերպելու եւ վերկանգնելու հայ գաղութները: Էքիզեան անդրադառնալով Հայրապետին 2022 եւ 2023 թուականները Սփիւռքի վերակազմակերպման աշխատանքներուն նուիրելուն՝ ըսաւ, որ ան իր գահակալութեան առաջին իսկ օրերէն, ուր որ գտնուեցաւ, Աթիլիասի Մայրավանքի սրբազան խորանէն մինչեւ Հայաստանի ամենէն պաշտօնական բեմերը, անհրաժեշտ ու խօսեցաւ Սփիւռքի մասին, մանաւանդ արտասանելով «Հայրենիքը կը պարպուի, Սփիւռքը կը մաշի» ծանրակշիռ խօսքը, որուն հրատապութիւնը կը շարունակէ յատկանշել հայ կեանքը իր ամբողջութեամբ: Ան լուսարձակի տակ բերաւ Վեհափառ Հայրապետին միջեկեղեցական նպաստը, եւ յառաջիկայ օրերուն Նորին Սրբութեան ունենալիք միջեկեղեցական հանդիպումները նկատեց իբրեւ պերճախօս վերակազմակերպման անոր միջեկեղեցական հանգանակներ: Էքիզեան իր խօսքին մէջ նաեւ յիշեց, որ Վեհափառ Հայրապետը ոչ միայն համազգային ղեկավար դեմք մըն է, այլեւ միջազգային հեղինակութիւն է: Ան իր խօսքի ւառարտին յիշեց Յունաստանի հայ գաղութի բերած նպաստը հայ կեանքէն ներս: Ապա, խօսք առաւ Ազգային Վարչութեան ատենապետ Թաւոր Յովակիմեան: Անոր խօսքին առանցքը կազմեց գաղութը գործու մասնակցութեամբ վերակազմակերպելու եւ վերականգնելու հրամայականը:

Գեղարուեստական յայտագիրէն ետք, Յունաստանի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան խօսք անելով՝ ընդօժեց Վեհափառ Հայրապետին 28-ամեայ ծառայութիւնը: Ան Նորին Ս. Օծութիւնը ներկայացուց իբրեւ հայ կեանքի տիտաններէն մէկը եւ Հայ եկեղեցույ մեծ հայրապետներուն արժանաւոր յաջորդը: Ապա, առաջնորդ սրբազանը, յանուն Յունաստանի հայոց թեմին, իբրեւ ախոյեանութեան խորհրդանշան, Հայրապետին նուիրեց ծիսակցութեան սուրճ:

Արդարեւ, ընդառաջելով Յունաստանի հայոց թեմի փափաքին, Վեհափառ Հայրապետը «Կիլիկեան Ասպետ» շքանշանով պարգևատրեց Ստեփան Մաթեոսեանն ու Մաննիկ Ազըրեանը, եւ «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով՝ Արա Մանկոյեանն ու Տիրուհի Գալֆայեան Ղալիլեանը՝ հայ մշակոյթին մէջ ու գաղութի կեանքէն ներս իրեն տարիներու ունեցած ծառայական վաստակին համար: Իր հայրական խօսքին մէջ, Նորին Սրբութիւնը վեր անելով հայ մշակոյթը, անոր բարոյական սկզբունքներն ու ազգային արժեքները, կարելորութեամբ շեշտեց գաղութը ոչ միայն պահելու, այլեւ ապրելու եւ զարգացնելու հրամայականը: Վեհափառ Հայրապետը ըսաւ, որ մշակոյթը հայ ժողովուրդի կեանքէն ներս սովորական երեւոյթ մը չէ: Անաց հայ մշակոյթին հայ ազգը պատմութեան փորձերէն ու մեջ պիտի կորսուի: Սակայն մեր մշակոյթին շնորհիւ մնացին կանգուն դժուարութիւններուն եւ տագնապներուն մէջ, նոյնիսկ ջարդերէն ետք: Վեհափառ Հայրապետը անդրադառնալով հայ արժեքներուն՝ ըսաւ. «Մշակոյթը, բարոյական սկզբունքներ եւ հոգեւոր արժեքներ, մեզի համար դարձան անբաժանելի մէկ ամբողջութիւն: Հոգեւորը՝ մեր կեանքին մէջ հայացաւ. հայը՝ իր հոգիով ու անանդութեամբ՝ քրիստոնէական նկարագիր ստացաւ. բարոյականը՝ մեր մշակութային ու ազգային տեսլականին, ձգտումներուն, իղձերուն եւ տագնապներուն եւութիւնը դարձաւ: Եւ մենք այս արժեքներով մեր ինքնութիւնը կերտեցինք»: Ան իր խօսքին մէջ բարձր գնահատեց ձեռնարկը ճոխացնող յունահայ երիտասարդութիւնը:

info **ԱՐԱՐԱՍ**

Սիրելի ընթերցող,
Տեղական, միջազգային, մշակութային, մարզական եւ այլ լուրեր բջջային հեռաձայնի վրայ հայերէնով ստանալու համար, անմիջապէս ներքեւէն լիբանանեան առաջատար եւ անվճար «INFO 3» յաւելուածը, որ հասանելի է Applestore-ի եւ Playstore-ի միջոցաւ:

Այսպիսով դուն հայերէնով եւ վայրկեանը վայրկեանին պիտի իմանաս օրուն վերջին զարգացումները:

ԱՐԱՐԱԴ ԶԱՐԿԱԿԱՆ ԳՐԱՆՈՒՄ

ԻՐՈՒՓԱ ԶՈՆՖՐՈՆՍ ԼԻԿԻ 1/8-ՐԴ ՄԱՐՏ. ԵՐՑ ՍԼՈՎԱՆ ՅԱՐԱՍԱՐԵՑԱՒ

Հինգշաբթի երեկոյան շարունակուեցան Երոպայի ֆուտբոլի ակումբներու երրորդ մրցաշարի՝ Իրոուփա Զոնֆրոնս Լիկի վերջին 16 խումբերու հանգրուանի երթի մրցումները: Այս հանգրուանին, Իտալիոյ «Լացիո Ռոմա» իր դաշտին վրայ մրցեցաւ Զոնֆրոնսի զօրաւոր



խումբերէն Ալքմարի «ԱՉ»ին դէմ: Մրցումի 18-րդ վայրկեանին, սպանացի յարձակող Փետրո Նշանակեց «Լացիո»ի կողմ, կիսապաշտպան Չաքիանի փոխանցումով: Սակայն, յոյ յարձակող Փավիտիս 45-րդ եւ հունգարացի պաշտպան Երեթե՛ 62-րդ վայրկեաններուն հաշիւը դարձուցին 1-2, շուտացի յարձակող Բարլոստի երկու փոխանցումներով: «ԱՉ» տարաւ կարելոր յաղթանակ մը: Իսկ Տիգրան Բարսեղեանի մաս կազմած Սլովաքիոյ ախոյեան «Սլովան Պրաթիսլաւա» իր դաշտէն դուրս կարելոր հաւասարութիւն մը արձանագրեց Չուիցերիոյ «Պազըլ»ին դէմ: Բարսեղեան դաշտ մտաւ 78-րդ վայրկեանին, փոխարինելով վրացի Չաքեթեանը: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Լացիո Ռոմա (Իտ.) - ԱՉ Ալքմար (Հոլ.) 1-2
- ԱԷԲ Լաոնաքա (Վիպ.) - Ուեսթ Յեմ Եոն. (Անգ.) 0-2
- Երեթե՛ Թիրասփոլ (Մլտ.) - Նիս (Ֆր.) 0-1
- Անտըրլէյթս (Պլճ.) - Վիյարեալ (Սպ.) 1-1
- Ֆիորենթինա (Իտ.) - Սիվասսփոր (Թրք.) 1-0
- Լեխ Փոզնան (Լեհ.) - Տիուրկարտըն (Շուեդ.) 2-0
- Պազըլ (Չուից.) - Սլովան Պրաթիսլաւա (Սլով.) 2-2
- Կենթ (Պլճ.) - Իսթամպուլ Պաշաքէիի (Թրք.) 1-1

ԶՈՒՄ ՍԻՏԱՄԵՐԻԵԱՆՅԻ ԶՏՈՒՄԻ Ա. ԳՆԱԳՐ. ԵՐՑ ԶՈՒԹՈ ԵՒ ՓԵՆԻԱՐՈՆ ՄԵՃ ԵԱՅԼ ԱՌԻՆ

Երեքշաբթի երեկոյան սկսան Հարաւային Ամերիկայի ֆուտբոլի ակումբներու երկրորդ մրցաշարի՝ Զոուփա Սիւտամերիքեանայի գտումի Ա. հանգրուանի երթի մրցումները: Ուրուկուէյի «Փենիարոլ»ը իր դաշտէն դուրս յաղթեց իր համերկրացի «Ռիվըր Փլէյթ»ին եւ մեծ քայլ առաւ դէպի յաջորդ հանգրուան: Փարակուէյի «Զուլա Կուարանի», Գոլմպիայի «Ինտիփենտիներէ Սանթա Ֆե» եւ Փերուի «Սեզար Վալեթ» մեծ քայլ առին դէպի խմբակներու հանգրուան: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Օտաքս Իթալիանս (Չիլի) - Ունիվերսիտատ Բաթոլիքա (Չիլի) 3-2
- Թաքուարի (Փար.) - Ժեներալ Բապայեթո (Փար.) 2-2
- Ռիվըր Փլէյթ (Ուր.) - Փենիարոլ (Ուր.) 0-4
- Զարաքսա (Վեն.) - Փուրկոն Զապեթո (Վեն.) 0-1
- ԼՏՈւ Զուիթո (Էք.) - Տելֆին (Էք.) 4-0
- Կուապիրա (Պոլ.) - Օրիենթէ Փերոլեթո (Պոլ.) 0-1
- Տեֆենսոր Սիորիլին (Ուր.) - Տանուալիո (Ուր.) 0-0
- Եսթիուանթե Մերիտա (Վեն.) - Տեփ.Թաչիրա (Վեն.) 1-1
- Սեզար Վալեթ (Փերու) - Տեփ.Պիլասիոնալ (Փերու) 3-1
- Պլումինկ (Պոլ.) - Աթլետիքո Փալմաֆլոր (Պոլ.) 6-0
- Զոպրեզալ (Չիլի) - Փալեսթինո (Չիլի) 0-1
- Տեփորթե Ռոլիմա (Գոլ.) - Ժուլիոր (Գոլ.) 1-0
- Էմբեյթ (Էք.) - Տեփորթիփո Զուենսա (Էք.) 2-1
- Ունիվերսիթարիո (Փերու) - Սիենսիանս (Փերու) 2-0

ԱՍԻՈՅ ՄԻՆՉԵՒ 20 ՏԱՐԵՎԱՆ ԿԻՆԵՐՈՒ 3-ՐԴ ԳՆԱԳՐ. ԼԻԲԱՆԱՆ ԳՐԱՒԵՑ ԱՌԱՋԻՆ ԴԻՐԸ

Շաբաթավերջին աւարտեցան Ասիոյ մինչեւ 20 տարեկան կիներու ֆուտբոլի բաժակի գտումի մրցումները: Ասիոյ խումբերը բաժնուեցան 8 խմբակի եւ ամէն խմբա-



կի առաջին դիրքը գրաւող խումբը պիտի անցնի յաջորդ փուլ: Յորդանանի մէջ, Լիբանանի հաւաքակազմը իր երրորդ մրցումին, հաւասարեցաւ Յորդանանի հետ առանց կոլերու, գրաւեց առաջին դիրքը եւ անցաւ յաջորդ փուլ: Լիբանանի հաւաքակազմէն փայլեցան Անժելինա Սաատէ, Զրիսթի Սահլուֆ եւ Սոֆի Ֆայյատ: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Դ.խմբակ. - Լիբանան - Յորդանան 0-0
- Պիուրան - Մոնկոլիա 4-0
- Դասաւորում. 1)Լիբանան 7 կէտ 13-2, 2)Յորդանան 7 կէտ 5-1, 3)Պիուրան 3 կէտ 6-7, 4)Մոնկոլիա 0 կէտ 1-15:

ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅԵԱՆ Բ.ՓՈՒԼԻ 10-ՐԴ ԳՆԱԳՐ. ԱՆ ԱՐԸՑ ՅԱՂԹԵՑ ԱՆՍԱՐԻՆ

Շաբաթավերջին շարունակուեցան Լիբանանի ֆուտբոլի ախոյեանութեան Բ.փուլի վերջին՝ 10-րդ հանգրուանի մրցումները: Այս հանգրուանի վերջին մրցումին, առաջատար «Ալ Ահլա» մրցեցաւ 2-րդ դիրքը գրաւող «Ալ Ասսար»ի դէմ ու յաղթանակ տարաւ: Մրցումի 40-րդ վայրկեանին, Ռապիի Աթաա Նշանակեց «Ալ Ահլա»ի կողմ: 84-րդ վայրկեանին, Հասան Մաաթուք տուգանային հարուածով հաշիւը դարձուց 1-1: 88-րդ վայրկեանին, Մոհամմատ Լասեր Նշանակեց «Ալ Ահլա»ի երկրորդ կողմ: 90+4-րդ վայրկեանին, Հասան Մաաթուք հաշիւը դարձուց 2-2: Սակայն, մրցումի 90+6-րդ վայրկեանին, Լի Իրուին Նշանակեց «Ալ Ահլա»ի յաղթանակի կողմ: Սակայն, մրցումի վերջին վայրկեաններուն «Ալ Ասսար»ի համակիրներէն խումբ մը բողոքելով իրաւարարի որոշումին դէմ սկսան աթոռներ նետել մարզադաշտ եւ մրցումը կանգ առաւ: Ֆետերասիոնը որոշում պիտի կայացնէ: Իսկ Ճուրիի քաղաքապետարանը ֆետերասիոնին յայտնեց, թէ յետապիտի պիտի չտայ մրցումը կայացնել «Ֆուտա Շեհապ» մարզադաշտին վրայ, խուլիկանական արարքներու պատճառով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Անաջին վեցեակ. - Ալ Ասսար - Ալ Ահլա 2-3
- Դասաւորում.1)Ալ Ահլա 34 կէտ 34-14, 2) Ալ Ահլա 9 մ 33 կէտ 36-11, 3) Ալ Ասսար 9 մ 32 կէտ 45-13, 4)Շապապ Ալ Սահել 23 կէտ 28-23, 5) Ալ Պըժ 21 կէտ 25-26, 6) Ալ Շապապ Ալ Ղազիէ 6 կէտ 16-39:

ԱՆԳՆՈՅ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 27-ՐԴ ԳՆԱԳՐՈՒՄ ԱՐՍԵՆԱԼ ԵՒ ՆԻԷՏԱԸՆ ՅԱՂԹԱԿԱՆ

Անգլիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 27-րդ հանգրուանի վերջին մրցումներու ծիրին մէջ, առաջատար «Արսենալ» իր դաշտէն դուրս մրցեցաւ 8-րդ դիրքը գրաւող Լոնտոնի «Ֆուլհեմ»ի դէմ ու արձանագրեց իր 21-րդ յաղթանակը:



Նակը: Պրազիլցի պաշտպան Կապիել Մակալիայէ՛ 21-րդ, պրազիլցի յարձակող Կապիել Մարթինելլի՛ 26-րդ եւ նորվեկիացի կիսապաշտպան Էօտըկարտ՛ 45+2-րդ վայրկեաններուն Նշանակեցին «Արսենալ»ի կողմը, պեյ-ճիքացի յարձակող Թրոսարի երեք փոխանցումներով: Իսկ 5-րդ դիրքը գրաւող «Նիւքեմը Եոնայթըտ»ը իր դաշտին վրայ մրցեցան 13-րդ դիրքը գրաւող «Վուլվըրհեմթոն» Ուոնտըրըք»ի դէմ ու յաղթանակ տարաւ, շուտացի յարձակող Իզաքի՛ 26-րդ եւ փոխարինող փարակուէյցի կիսապաշտպան Ալփրոնի՛ 79-րդ վայրկեաններուն Նշանակեց կոլերով, պաշտպան Թրիփիէի եւ կիսապաշտպան Ուիլոքի փոխանցումներով: 70-րդ վայրկեանին, փոխարինող յարձակող քրոեացի Զի-Չան Հունանկ Նշանակեց «Ուոնտըրըք»ի կողմ: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Ֆուլհեմ - Արսենալ 0-3
- Մանչեսթըր Եոն. - Սաութհեմփթըն 0-0
- Ուեսթ Յեմ Եոն. - Ասթըն Վիլլա 1-1
- Նիւքեմը Եոն. - Վուլվըր.Ուոնտըրըք 2-1
- Դասաւորում.1)Արսենալ 66 կէտ 62-25, 2) Մանչեսթըր Սիթի 61 կէտ 67-25, 3) Մանչեսթըր Եոն. 26 մ 50 կէտ 41-35, 4) Թրոլնհեմ 48 կէտ 49-37, 6) Լիվըրպուլ 26 մ 42 կէտ 47-29, 10) Չելսի 26 մ 37 կէտ 27-26:

ԱՅՍՕՐՈՒԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐ

- ՉԵՄՓԻԸՆՉ ԼԻԿԻ 1/8-ՐԴ ՄԱՐՏ.ԴԱՐՁ**
22:00 Մանչեսթըր Սիթի (4) - Ռ.Պ Լայպցիկ (11)
22:00 Փորթո (13) - Ինթեր Միլան (12)
- ԱՐԱՐԱԿԱՆ ԱԿՈՒՄ. ԲԱԺԱԿԻ 1/16-ՐԴ ՄԱՐՏ.ԵՐՑ**
17:30 Մուհարրաք (120) - Ալ Սիպ (110)
- ՈՌՈՒՄՈՅ ԲԱԺԱԿԻ ԿԻՍԱՄԱՐՏ. ԵՐՑ**
16:30 Աքրոն (Բ.) - Լըոնոթի. Մոսկուա (Ա.)
19:00 Սպարտակ Մոսկուա (2) - Ուրալ Եքաթ. (10)
- ԴԱՉԱՆՍԱՆԱՆԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 3-ՐԴ ԳՆԱԳՐՈՒՄ**
17:00 Աքրանս (3) - Աքթոպէ (2)
- ՊՐԱՉԻԼԻ ԲԱԺԱԿԻ 1/32-ՐԴ ՄԱՐՏ.**
01:00 Զորիթիպա (Ա.) - Զրիսիումա (Բ.)
02:30 Ամերիքա Միներո (Ա.) - Սանթա Զրուգ (Շրք.)
- ՊԱՍԵԹՊՈՒԼԻ ԵՆ.ՊԻ.ԵՅ.-Ի ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՆ**
01:30 Թորոնթո Ռեփորթ (9) - Տենվըր Նակեց (1)
04:00 Ֆիլիքս Սանա (4)- Միլոնքի Պաքս (1)
- ՊԱՍԵԹՊՈՒԼԻ ԼԻԲԱՆԱՆԻ 19-ՐԴ ԳՆԱԳՐՈՒՄ**
17:00 Յ.Մ.Ը.Մ. (10) - Ն.Ս.Ա.Անթիլիաս (9)
19:30 Հուլիս (8) - Տիւմո Զլապ (1)
- ԹԵՆԻՍԻ ԻՆՏԵՆՆ ՈՒԵԼՉԻ ՄԱՍԹԸՐԸՅԻ 1/8-ՐԴ ՄԱՐՏ.**
01:00-Էն սկսեալ, «beinsports» կայանէն
- ՀԵՇՏԵԼՐԸԱԻ**
03:30 Թայուանի շրջապաք, «eurosport» կայ.
- ՉՏԵՆՈՒՄԻ ՍԱՐՉԱՅԵՐ**
12:30 Դահուկարչաի Տրամըլի մրցում, «eurosport» կայ.
17:10 Դահուկով ցատկի Լիլըհամըրի մրցում, «euro-sport» կայ.

ՊԱՍԵԹՊՈՒԼ ԵՆՈՐՈՒԿԻ 28-ՐԴ ԳՆԱԳՐՈՒՄ ՕԼԻՄՓԻԱՔՈՍ՝ ԱՆԿԱՍԵԼԻ

Շաբթուան ընթացքին տեղի ունեցան պասթեպոլի Երոպայի տղոց ակումբներու առաջնակարգ մրցաշարի՝ Եուրոլիկի 27-րդ եւ 28-րդ հանգրուաններու մրցումները: Այս հանգրուանին, 2-րդ դիրքը գրաւող Յունաստանի «Օլիմփիաքոս»ը իր դաշտին վրայ յաղթեց 3-րդ դիրքը գրաւող Սպանիոյ «Պարսելոնա»ին ու օգտուելով առա-



ջատար «Ռեալ Մատրիտ»ի պարտութենէն, գրաւեց առաջատարի դիրքը: «Օլիմփիաքոս»ի ամենալաւ Նշանակողն էր ամերիկացի կարտ Շաքիլ Մաքքիսիք, փըրֆորմընս ինտէքս՝ 16, իսկ «Պարսելոնա»ի ամենալաւ Նշանակողն էր սպանացի Նիքոլա Միորոթիք, փըրֆորմընս ինտէքս՝ 21: Ստորեւ տեսնել 27-րդ հանգրուանին արձանագրուած արդիւնքները:

- Օլիմփիաքոս Փիրէնս (Յուն.) - Պարսելոնա (Սպ.) 77-70
- Վիրթիս Պոլոնիա (Իտ.) - Փարթիզան Պելկրատ (Սրպ.) 79-88
- Ռեալ Մատրիտ (Սպ.) - Պասքոնիա Վիթորիա (Սպ.) 81-85
- Մաքայի ԹԱ (Իսր.) - Ֆեներպահչէ (Թրք.) 78-74
- Յրվենա Չվեզտա (Սրպ.) - Անտոլու Էֆէտ (Թրք.) 94-75
- ԱՍ Մոնաքո (Ֆր.) - Փանաթինայքոս Աթէնք (Յուն.) 84-70
- Իսկ 28-րդ հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.
- Շալկիիիս Զաուսաս (Լիթ.) - Լիոն Վիլտորպան (Ֆր.) 85-67
- Օլիմփիաքոս Փիրէնս (Յուն.) - Պայըրն Միւնիխ (Գեր.) 102-74
- Արմանի Միլան (Իտ.) - Փարթիզան Պելկրատ (Սրպ.) 76-62
- Ռեալ Մատրիտ (Սպ.) - Վալենսիա Պաքթէ (Սպ.) 95-91
- Անտոլու Էֆէտ (Թրք.) - Մաքայի ԹԱ (Իսր.) 64-86
- Ֆեներպահչէ (Թրք.) - Պարսելոնա (Սպ.) 81-73
- Պասքոնիա Վիթորիա (Սպ.) - ԱՍ Մոնաքո (Ֆր.) 93-102
- Դասաւորում.1)Օլիմփիաքոս 20 յաղթ - 8 պարտ / կէտերու տարբ.+258, 2) Ռեալ Մատրիտ 19-8 / +178, 3) Պարսելոնա 18-10 / +92, 4) Մոնաքո 18-10 / +54, 5)Ֆեներպահչէ 17-10 / +100, 6)Պասքոնիա 15-13 / +67, 7)Փարթիզան 15-13 / +57, 8)Մաքայի 15-13 / +3:

ԹԵՆԻՍ ԻՆՏԵՆ ՈՒԵԼՉԻ ՄԱՍԹԸՐԸՅԻ ՄՐՅԱԵՐԸ ԽԱՉԱՆՈՎ ՉԻՋԵՑԱՒ

ԱՄ-ի Զալիֆորնիա Նահանգի «Ինտիլն Ուելք» ակումբի թենիսի մարզադաշտերուն վրայ սկսան այս տարուան



առաջին մասթըրզի մրցումները: Տղոց մրցաշարի 1/32-րդ հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքը.

- Կ.Խաչանով (13) - Օ.Օթթէ (Գեր.) 6-3, 6-3
- Այս արդիւնքին հիման վրայ, թիւ 13 դասուած հայազգի Կարեն Խաչանով անցաւ վերջին 32 մարզիկներու հանգրուան:
- Իսկ 1/16-րդ հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքը.
- Ա.Տալիտովիչ ֆրոնս (23) - Կ.Խաչանով (13) 6-3, 1-6, 6-4
- Այս արդիւնքով, հայազգի կարեն Խաչանով զիջել թիւ 23 դասուած սպանացի Ալեխանտո Տալիտովիչ ֆրոնսային եւ իրաժեշտ տուաւ մրցաշարքին:

 www.araraddaily.com

ARARAD DAILY NEWSPAPER
MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN
Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمنية | المحبرة المسؤولة: أني صرافيان
تصدر عن شركة مسيسر للمباعة والنشر (ش.م.م.)